

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊԶԲ-2026/Հ-23 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	տաբատներ	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	Տաբատ՝ մուգ կապույտ: Գուճային կողը՝ ըստ PANTONE տեքստիլ կատալոգի 19-4013 TPX կամ NCS գուճային կատալոգի S 8005-B: Ուղիղ կտրվածք՝ գոտկատեղով: Կտորի բաղադրությունը՝ պոլիէսթեր - 65±5%, բամբակ - 35±5%): Մակերեսային խտությունը 220±10 գ/մ2: Գործվածքը պետք է հյուսված լինի ռիպստոպ (rip-stop) նախշով: Գոտկատեղի լայնությունը 5.0 (±0.3) սմ: Գոտին ամրացվում է առջևից՝ դրսից՝ մուգ գույնի մետաղական կոճգամով, ներսից՝ Ø 1,5 (±0,2) սմ կոճակով: Նույն գործվածքից պատրաստված յոթ օղակ կարված է գոտկատեղին՝ գոտի կապելու համար: Առջևի (երկու) և հետևի (երեք) կողմերի լայնությունը 4,5 (±0,2) սմ է, կողայինները (մեկական) 2,0 (±0,2) սմ: Օղակների բացվածքը՝ 7 սմ է: Տաբատի գոտկատեղը կարգավորվում է առաձգական ժապավեններով և

				կոճակներով: Էլաստիկը պետք է ունենա $3 \pm 0,1$ սմ լայնություն, առնվազն 11 սմ երկարություն, ժապավենը պետք է լինի հիմնական գործվածքից: Տաբատի առջևի հատվածն ամրացվում է պլաստիկ կայծակաճարմանդով: Կայծակաճարմանդի երկարությունը $16 \pm 0,5$ սմ է, ատամների լայնությունը՝ $0,6 (\pm 0,2)$ սմ: Գոտկատեղից ներքև՝ տաբատի առջևի մասում, կան երկու անկյունագծային, ներդիր, ձևավորված գրպաններ և ևս երկու գրպաններ՝ հետևի մասում կափարիչներով, որոնք ամրացվում են երկու կաչուն ժապավեններով: Տաբատի կողքերին կարվում են ևս երկու լայնածավալ վրադիր գրպաններ՝ կափարիչներով: Գրպաններն ամրացվում են երկու կաչուն ժապավեններով: Ճակների և հետույքի հատվածում կարվում են հավելյալ դետալներ հիմնական գործվածքից: Ճակների հակառակ կողմը մշակվում է Էլաստիկ կտորով: Տաբատի ներքևի մասը ավարտված է ծայրի կարով, որի մեջ մտցվում է առաձգական պարան՝ տաբատի ներքևի մասի լայնությունը հարմարեցնելու համար: Տաբատի ներքևի մասում կան երկու անցք՝ առաձգական լարը անցկացնելու համար: Տաբատի կարերը պետք է լինեն ամուր, կարված շղթայով, իսկ ծայրերը՝ ամրացված: Բացի այդ, կարերի ծայրերը ամրացվում են ամրացումներով (հատուկ մեքենա)՝ վրադիր գրպանների անկյուններում, առջևի գրպանների անկյուններում, կափարիչների անկյուններում: Տաբատի կողային կարերը, առջևի և հետևի եզրերը ավարտվում են երեք կարով, մնացած կարերը՝ երկու կարով: Կոճակներ և կոճգամները՝ սև:
--	--	--	--	---

				Կոճգամները պետք է լինեն մետաղական, մուգ գույնի, դիմացկուն մթնոլորտային ազդեցություններին (չժանգոտվող պողպատ) Ø 1,4 սմ: Պարանը պետք է լինի կլոր, սև կամ նույն գույնի, ինչ հիմնական գործվածքը: Կարի թելի գույնը պետք է համապատասխանի գործվածքի գույնին, թելը պետք է լինի պոլիէթեր, ամրացված և դիմացկուն մթնոլորտային ազդեցություններին: Հարդարման կարերի խտությունը 3-4 կար/1սմ է: Գործվածքը պետք է հյուսված լինի ռիպստոպ (ripstop) օրինակով: Գրպանի պայուսակներ՝ հիմնական գործվածք: Փաթեթավորումը՝ սովորաբար արկղերով կամ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, արկղերի (պարկերի) մեջ մինչև 20 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում: Մատակարարման ժամանակ ներկայացվում է համապատասխանության սերտիֆիկատ՝ գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, տրված արտադրողի կողմից մատակարարին:
--	--	--	--	--

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ
ԷՍՀԱՊՁԲ-2026/Հ-23 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1				